

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻՑ

Ա. ԵՐՈՒԱՆԳ ԼԱԼԱՅԵԱՆ

Երեւանում, Փետրուարի 26ին, սրտի կաթուածից վախճանուեց յայտնի ազգագիր Երուանդ Լալայեան (1):

Բ. ՆԿԱՐԻՉ ՄԻՔԱՅԷԼ ԽՈՒՆՈՒՆՅԻ

Հայաստանի նկարչութիւնը կորցրեց իր շարքերից լաւագոյն գրաֆիկ-նկարիչներից մէկին, որ գասաւանդում էր Թիֆլիսի բազմաթիւ բարձրագոյն եւ միջնակարգ դպրոցներում:

Միքայէլ Խունունցն է գա:

Բարձրագոյն կրթութեամբ կուլտուրական նկարիչ էր Խունունցը: Նա ոչ միայն լաւագոյն դժագէտ - գրաֆիկ - նկարիչ էր:



Հեֆեսք. — Նկար ՄիքԱյէլ ԽՈՒՆՈՒՆՅԻ

ալլ եւ լաւագոյն մանկավարժ էր. շնորհիւ իր համեստ եւ անկեղծ բնաւորութեան՝ սիրուած էր գալրոցական ասպարիզում:

Ուշագրաւ են Խունունցի գեղեցիկ նկարազարդած հայկական հէքեաթները, որոնց նմուշներից մի քանիսը գտնուում են Երեւանի եւ ալլ թանգարաններում:

(1) Յաւաչիկայ Թիւով պիտի հրատարակենք մեր աշխատակցին մանրամասն յօդուածը հանգուցեալ Լալայեանի մասին: Ի. Խ.

Գ. ԳԵՐՍՍԱՆ ՅՈՎՀ. (ՎԱՆՈ) ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Թիֆլիսում վախճանուեց հայ բեմի վեթերաններից Յովհաննէս Տէր-Գրիգոր:



Դերասան ՅՈՎՀ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

եանը: 1864 թուից նա նուիրւում է բեմին եւ խաղում Շիրմազանեանի դարբասում, ապա Թամամշեանի և Գր. Արծրունու թատրոններում:

Խոշոր բեմական տաղանդ չէր, բայց և այնպէս նա իր խաղով ու մասնակցութեամբ ամէն կերպ նպաստում էր բեմական գործի յաջողութեանը:

Նա հանդիսանում է ժողովրդական Տան հիմնադիրներից մէկը: Երկար սարիներ մասնակցում էր Խոսե Աւճալեան, Հաւլաբարի եւ Արաքսեանի թատրոնների ներկայացումներին:

1925 թուին Ռուսթաւելու թատրոնում ստնուում է նրա բեմական գործունէութեան 40-ամեակը, որից յետոյ նա թողակ էր ստանում վրաստանից ու Հայաստանից եւ համարեա քաշուած էր թատրոնական ասպարիզից:

Գ. ԿԱՐԱՆ - ԴԱՐԻԻՇ

Թիֆլիսում, Դեկտեմբեր 16ին յանկարծամահ եղաւ հայկական ֆուտուրիզմի գրօշակակիր Կարա-Դարւիշը:

Իր աշխարհայեացքով, իր գրելու ձեւով, իր ստեղծագործութիւններով մինչեւ վերջն էլ հաւատարիմ մնաց իր սիրած գրօշին:

Չնայած սակայն դրան, նրան ոգեւորում էր Հայաստանի նոր կեանքը, նոր կուլտուրան: Առանձին հրճուանքով գիտում էր նա նոր շինարարութիւնը, նոր արուեստը եւ ոգեւորուած պատմում, խօսում, գրում: «Պրոլետար»ում նրա տպուած

յօդուածները՝ Խորհ. Հայաստանի նոր շինարարութեան եւ արուեստի ցայտուն պատկերներն են, որոնք ցոյց են տալիս նրա անկեղծ ոգեւորութիւնը:

Վրաստանի կառավարութիւնը նրան տալիս էր թոշակ: Գրում էր եւ յօդուածներ եւ այդպիսով պահպանում իր գոյութիւնը:

Նրա թողած գրական ժառանգութիւնը պատկանում է անցեալին: Իբրեւ այդպիսին էլ նա գրաւելու է իր տեղը հայ գրականութեան մէջ:

Թիֆլիս

Ա. ԵՐ.

ԼՐԱՏՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻՑ

ԹԱՏՐՈՆ

Հայ բասրոնի ֆննադասական պատմութիւնը.— Բանասէր-գրականագէտ Արամ Երեմեանը պատրաստել է խիստ հետաքրքիր մի ուսումնասիրութիւն Հայ բասրոնի ֆննադասական պատմութիւնը խորապրով, որ ընդգրկում է սկզբից մինչեւ ութսունական թուականների թատրոնի պատմութիւնը (Ա. հատոր): Այդ պատճառով գալիս է լրացնելու նախ՝ հայ թատրոնի պատմութեան բացը, երկրորդ՝ տալիս է մեզ հայ թատրոնի աստիճանական զարգացման ֆննադասական ամփոփ պատմութիւնը, ուղղելով Ա. օր, Պոօշեանի, Փափաղեանի, Մանուէրեանի եւ այլ գրողների սխալ եզրակացութիւնները եւ հակասութիւնները: Այն կարծիքը թէ ուստի հայ թատրոնը սկիզբ է առել Մասիսում 1858 կամ 1859 թուին, եւ որն իշխում է մինչեւ օրս հայ թատերական գրականութեան պատմութեան մէջ, հերքուած է: Ապա փաս-

տացի տուեալներով պարզաբանուած է 30ական թուականների թատրոնական աշխարհում, որ մինչեւ օրս չի լուսաբանուած:

«Հայ թատրոնի պատմութիւն»ը սկսում է հայ թատրոնի ծագման շրջանից: Ապա լուսաբանուած են թատրոնական բոլոր աշխարհումները, որոնք տեղի են ունեցել 5րդ, 7րդ, 11րդ, 17րդ եւ 19րդ դարաշրջաններում: Առանձին տեղ են զբաղում 19րդ դարի 30ական, 40ական, 50ական, 60ական եւ 70ական թուականների հայ թատրոնի պատմաշրջանները: Այդ բոլորը կազմում են Հայ բասրոնի պատմութեան Ա. մասը: Երկրորդ հատորն ընդգրկելու է իր մէջ 80ական թուականներից մինչեւ մեր օրերը:

Երեւանի Պետրասրոնը.— Առաջին Պետրասրոնը (Երեւանի) յայտարարել է իրեն հարուստ լինել: Կազմուած է հանդիպական արգֆիկալան, որով այս թատերաշրջանում պիտի բեմադրուի 192 ներկայացում անցեալ թատերաշրջանի 142 ներկայաց-